368 = 7 217 1927

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հ. Ս. Խ. Հ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻՆ

ԱՌԸՆԹԵՐ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1|X 1924—1|X 1925 թ.

ՀՐԱՏԱՐԱԿ. Հ. Ս. Խ. Հ. ՍՈՑ. ԱՊԱՀՈՎԱԳՐ. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1926

Ղարաքիլիսայի Տպարան

724
368.4
354.37

*Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք*

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## Հ. Ս. Խ. Հ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1/X 1924—1/X 1925 թ.

Հ. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ
Наркомпрос С.С.Р. Армении
Книжная палата

ՀՐԱՏԱՐԱԿ. Հ. Ս. Խ. Հ. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ԱՐԽԻՎ

724-Ա9-2

Տպագրական Տրեստի Ղարաքիլիսայի տպարան № 320

Գաւառեղվար № 48 Տիրաժ 1000

# ԻՆՉ Է ԱՐՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1924/1925 Թ. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

## Ն Ա Խ Ա Բ Ա Ն

*Սոցիալական ապահովագրությունը գոյություն ուներ և ցարական Ռուսաստանում, սակայն նա ընդգրկում էր սոցիալական ապահովագրության մի քանի տեսակը միայն, այն էլ ոչ բոլոր վարձու աշխատավորների նկատմամբ, այլ միայն խոշոր գործարաններում և աղճատված ձևով։*

*Ցարիզմը տապալելուց հետո, Ռուսաստանի ժամանակավոր կառավարության «Կերենշչինայի» օրոք թեև խոսվեց սոցիալական ապահովագրության մասին, մի քանի դեկրետներ էլ հրատարակվեցին, բայց համարյա թե և ոչ մի էական նշանակություն ունեցող փոփոխություն չկատարվեց և հարցը մնաց իր նախկին դրության մեջ, այլ խոսքերով. «Անունը կար, ամանումը չկար»։*

*Իսկ դաշնակցական Հայաստանում սոցիալական ապահովագրության անունն էլ չկար. ցարական օրենքները վերացված էին, նորերն էլ չկային։*

*Հայաստանում սոցիալական ապահովագրությունն սկսվում է միայն 1920 թվի վերջին ամսից, երբ «Ազգային դաշնակցական կառավարությունը» տեղի յե տալիս և Հայաստանում հաստատվում է Բանվորագյուղացիական Խորհրդային իշխանությունը։*

*Սկզբնական շրջանում, մինչև սոցիալական ապահովագրության մարմինների կազմակերպումը, վարձու բանվորների և ծառայողների սոցիալական ապահովագրությունը տանում էր Սոցիալական Ապահովության Ժողովրդական Կոմիսարիատը ընդհանուր հիմունքներով, իսկ 1922 թ. օգոստոսից, համաձայն հրատարակված նոր դեկրետի, աշխատավորական տարրի սոցիալական ապահովագրության գործը հանվում է Սոց. Ապ. Ժողկոմատի իրավասությունից և կենտրոնացվում է Աշխատանքի Ժողովրդ. Կոմիսարիատին առընթեր—Սոցիալական Ապահովագրության Խորհրդում։ Սոցիալական ապահովագրության խորհուրդը, որ միջվարչական մի կազմակերպություն էր, իր կարճատև գոյությունից հետո նոր ձևակերպումն է ստանում ու վերջ ի վերջո դառնում է Աշխժողկոմատին առընթեր մարմին. «Սոցիալական Ապահովագրության Վարչություն» անվան տակ, որի գլուխն է կանգնած վարչության պետը, որ միաժամանակ և Աշխժողկոմատի կոլեգիայի անդամ է։*

Խորհրդային յերկրներում, ինչպես և Խորհրդային Հայաստանում կիրառվող սոցիալական ապահովագրություն և կապիտալիստական յերկրներում ընդունված սոցիալական ապահովագրության միջև եյական խոշոր տարբերություններ կան, վորոնց կթվենք մի քանիսը միայն.—

ա) Կապիտալիստական յերկրներում սոցիալական ապահովագրությունը վորոշ չափով ծանրանում ե բանվորների և ծառայողների բյուջեյի վրա, վորովհետև բանվոր ծառայողներն ել են պարտավոր իրենց աշխատավարձից նույնպես տոկոսներ տալ, մինչդեռ մեզանում բանվոր-ծառայողն իր աշխատավարձից և վոչ մի գրոշ չի տալիս, այլ սոցապահովագրությունն ամբողջովին ծանրանում ե անխտիր կերպով բոլոր այն հիմնարկների և ձեռնարկությունների վրա, վորոնք վարձու աշխատանք են կիրառում: Այս մասին Աշխատանքի Օրենսգրքի 178-հոդվածն ասում ե. «Ապահովագրական վճարումները հատուցանում են այն ձեռնարկությունները, հիմնարկությունները, տնտեսությունները կամ անձինք, վոր վարձու աշխատանքից են օգտվում առանց ապահովագրվողի վրա տուրք դընելու իրավունք ունենալու և առանց նրանց աշխատավարձից կտրելու»: Այս Աշխօրենսգրքի 177-րդ հոդվածում ասվում ե. «Սոցիալական ապահովագրությունն իրագործելու համար սահմանվում են ապահովագրական վճարներ—աշխատավարձի հարաբերական տոկոսների հաշվով: Ապահովագրական վճարների չափը սահմանվում ե Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վորոշումներով—ձեռնարկության վնասակարության և վտանգավորության աստիճանի համեմատ»:

Այդ հոդվածի վրա հիմնված Ս. Խ. Հ. Ֆեդերացիայի Ժողկոմխորհի 1922 թ. հունվարի 2-ի և 12-ի վորոշումների համաձայն, վարձու աշխատանք կիրառող անխտիր կերպով խոշոր պետական, հասարակական և մասնավոր հիմնարկությունները, ձեռնարկություններն ու տնտեսությունները ըստ իրենց աշխատանքների բնույթի և աշխատավորների համար ներկայացրած վնասակարության և վտանգավորության աստիճանի—բաժանված են 4 կարգի, վորոնց համար և սահմանված ե Սոց. Ապահովագրության մուծանքների նորմալ կոպարացույց. 1-ին կարգում դասվող հիմնարկ-ձեռնարկությունների համար ըստ այդ կոպարացույցի սահմանված ե 16 տոկոս, 2-րդ կարգում դասվածների՝ 18 տոկոս, 3-րդ կարգում դասվածների համար՝ 20 տոկոս և 4-րդ կարգում դասվածների համար՝ 22 տոկոս:

Սոցապտոկոսները հաշվելիս հիմք ե ընդունվում տվյալ հիմնարկ-ձեռնարկության կողմից վարձու բանվորներին և ծառայողներին տրված աշխատավարձի ընդհանուր գումարը:

Սոցապտոկոսների վերոհիշյալ կոպարացույցը համարվում ե նորմալ և ընդհանուր ե ու պարտադիր բոլորի համար, սակայն ի նկատի առնելով այս կամ այն արդյունաբերության վորևե ճյուղի զարգացման անհրաժեշտությունը և նրա հանրային նշանակությունը, Ս. Խ. Հ. Մ. Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1925 թ. փետրվարի 26-ի վորոշմամբ սահմանված ե և ժամանակավոր արտոնյալ կոպարացույց: Համաձայն այդ կոպարացույցի 10 տոկոս են վճարում (առանձին ցուցակով հրատարակված) պետական, լեռնային, մետաղի և ելեկտրականության արդյունաբերությանց կոմունալ տնտեսությունների, անշահավետ ձեռնարկությունների, շինա-

բարական աշխատանքների և մի քանի այլ հանրոգուտ ձեռնարկությունների համար։

բ) Կապիտալիստական յերկրներում սոցիալական ապահովագրությունը ընդգրկում է ապահովագրության մի քանի տեսակները միայն։ Ներքեվում առաջ ենք բերում մի աղյուսակ, վորից պարզ յերեւում է թե վո՞րտեղ և յե՞րբ է ընդունված սոցապահովագրության այս կամ այն տեսակը։

Սոցիալական ապահովագրության վերաբերյալ հրատարակված որենքների տարեթիվը.—

| ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ | Դժբախտ պատահարների մասին | Հիվանդության դեպքում ապահովագր. դեպք. | Հաշմանդամության մասին | Զառամության մասին | Գործազրկության մասին. |
|---|---|---|---|---|---|
| Գերմանիայում . . | 1884 | 1883 | 1889 | 1889 | 1919 |
| Ավստրիայում . . | 1887 | 1888 | — | — | 1920 |
| Վենգրիայում (Հունգարիա) . . | 1907 | 1891 | — | — | 1919 |
| Դանիայում . . . | 1897 | — | 1921 | 1891 | — |
| Նորվեգիայում . . | 1894 | 1909 | — | — | — |
| Ֆինլանդիայում . . | 1895 | — | — | — | — |
| Անգլիայում . . . | 1897 | 1911 | 1911 | 1908 | 1911 |
| Ֆրանսիայում . . | 1898 | — | 1910 | 1910 | 1919 |
| Իտալիայում . . . | 1898 | — | 1919 | 1919 | 1919 |
| Իսպանիայում . . | 1900 | — | 1919 | 1919 | — |
| Հոլանդիայում . . | 1901 | 1913 | — | — | — |
| Շվեցիայում . . | 1901 | — | 1913 | 1913 | — |
| Ռուսաստանում . . | 1903(18) 21 | 1912 18/21 | 1918/ 21 | 1918/ 21 | 1917/18/21 |
| Բելգիայում . . . | 1903 | — | — | — | — |
| Սերբիայում . . . | 1910 | 1910 | — | — | — |
| Ռումինիայում . . | 1912 | 1912 | 1912 | 1912 | — |
| Շվեցարիայում . . | 1912 | — | — | — | — |
| Պորտուգալիայում . | 1913 | — | — | — | — |
| Հունաստանում . . | 1915 | — | — | — | — |

Առաջ բերված աղյուսակից դժվար չե նկատել, վոր յեվրոպական պետություններից շատերում դեռ մինչև օրս էլ սոցիալական ապահովագրության հիմնական տեսակներից գործազրկության, աշխատանքի անկարության և հաշմանդամության ապահովագրությունը չի կիրառվում, իսկ կիրառվող տեսակների մասին էլ դժվար չե յենթադրել, վոր ընդունված են մեր Կարմիր Հոկտեմբերի ճնշման տակ։

Այսպես՞ թե այնպես, անկասկած ե, վոր կապիտալիստական յերկրներում Սոցիալական ապահովագրության մի քանի տեսակները ընդունված են, բայց՝ թե ինչպես են նրանք իրագործվում, ահա դա չե եյականը։ Դժբախտ պատահարի դեպքում, պետք ե դատարանով ապացուցել, վոր բանվորն ինքը անփույթ կամ մեղավոր չե յեղել, իր կողմից ապառկոսները ժամանակին մուծել ե և այլն։

Հիվանդության դեպքում՝ պետք ե դարձյալ դատարանով ապացուցել, վոր հիվանդացել ե աշխատանքի մեջ և նրա հետևանքով և այլն, իսկ այդ այնքան էլ հեշտ բան չե և կապված ե մեծամեծ ծախքերի (փաստաբանի և այլն) ու ձգձգումների հետ։ Մինչդեռ մեզանում սոցիալական ապահովագրությունը ընդգրկում ե վոչ միայն սոցիալ. ապահովագրության բոլոր հիմնական տեսակներին, այլ և նրա լրացուցիչ տեսակները՝ նեցուկի մահացումը, ապահովագրվածի կամ նրա ընտանիքի անդամի ծննդաբերությունը, յերեխայի համար անհրաժեշտ օժիտը, նրան կերակրելը, ապահովագրվածի ընտանիքի անդամի թաղումը և այլն։ Այս առթիվ Աշխ. Օրենսգրքի 176-րդ հոդվածը ասում ե. «Սոցիալական Ապահովագրությունն» ընդգրկում ե.—ա) Բժշկական օգնություն հասցնելը, բ) Աշխատունակությունը կորցնելու դեպքում հիվանդության, խեղանդամության, կարանտին, հղիության, ծննդաբերության, ընտանիքի հիվանդ անդամի խնամելը (նպաստներ տալը) գ) Լրացուցիչ նպաստներ տալը (յերեխա կերակրելու, խնամելու, թաղման համար), դ) Գործազրկության դեպքում նպաստներ տալը. յե) Հաշմանդամության դեպքում նպաստ տալը, զ) Վարձով աշխատողների ընտանիքների անդամներին նպաստներ տալը, նրանց կերակրողի մահվան կամ անհայտ բացակայության դեպքում։

գ) Կապիտալիստական յերկրներում ընդունված պոչատ սոցիալ. ապահովագրությունը կիրառվում ե միևնույն պետության վոչ բոլոր վայրերում և տարածվում ե միմիայն ծանր արդյունաբերություններում զբաղված բանվորների մի քանի կատեգորիաների վրա միայն, մինչդեռ մեզանում համաձայն Աշխօրենսգրքի 175-րդ հոդվածի. «Սոցիալական ապահովագրությունը տարածվում ե վարձու աշխատանքով զբաղված բոլոր անձանց վրա, ուր էլ վոր զբաղված լինեն նրանք, պետական, հասարակական, կոոպերատիվ, կոնցեսսիոն, վարձակալական, խառն կամ մասնավոր ձեռնարկություններում, հիմնարկություններում կամ տնտեսություններում, թե մասնավոր անձանց մոտ, անկախ նրանց կատարած գործի բնույթից ու տևողությունից և նրանց վարձատրելու յեղանակից»։

Այսպիսով մեզանում ապահովագրված են, թե ծանր և թե թեթև արդյունաբերություններում վարձու աշխատանքով զբաղվածները, թե բանվորները և թե ծառայողները, թե պետական ու հասարակական հիմնարկձեռնարկություններում զբաղվածները և թե մասնավոր անձանց մոտ վարձվածները:

գ) Կապիտալիստական յերկրներից շատերում (օրինակ՝ Գերմանիայում) սոցիալական ապահովագրության գործը կենտրոնացած է իրենց իսկ կապիտալիստների ձեռքում, նախագահությամբ վոստիկանապետի, մինչդեռ մեզանում այդ գործը կենտրոնացած է բանվորական միջմիութենական կոնֆերենցիայում՝ ընտրված բանվորներից կազմված կոմիտեների ձեռքում, վորոնք և աշխատում են Արհմիությունների և Աշխժողկոմատի հսկողության ներքո: Սոցիալական ապահովագրության այսպիսի դրությունն ինքնին գալիս է միանգամայն պաշտպանելու ապահովագրվածների շահը և իրավունքը, ուրեմն և պարզ է, վոր վոչ մի դատարանի կարիք զգացվել կամ ձգձգումներ տեղի ունենալ չեն կարող: Այս առթիվ Աշխ. Օրենսգրքում ասված է. (հոդված 191-րդ) «Յեթե ձեռնարկությունները, հիմնարկությունները, տնտեսությունները և առանձին անձինք չհատուցանեն իրենցից պահանջվող ապահովագրական վճարները (հոդ. 178).—Այդ բնավ չպիտի զրկե նրանց մոտ վարձով աշխատողներին այն Օրենսգրքի 176 և հաջորդ հոդվածներով նախատեսնված բոլոր նպաստներն ստանալու իրավունքից: Ապա 192-րդ հոդվածում ասվում է. Սույն օրենսգրքով, ինչպես նաև այլ օրենքներով սահմանված սոցիալական ապահովագրության կանոնների խախտողները յենթարկվում են քրեական պատասխանատվության Քր. Օրենսգրքի համապատասխան հոդվածների համաձայն:

Այժմ տեսնենք թե, ինչ է կատարված սոցիալական ապահովագրության բնագավառում—Խորհրդային Հայաստանում 1924/25 բյուջետային տարում այսինքն՝ 1924 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 1925 թ. հոկտեմբերի 1-ը:

## ՍՈՑԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

### Ա) ՍՈՑԱՊՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային Հայաստանի Սոցիալական Ապահովագրության կենտրոնական մարմինն է Սոցիալական Ապահովագրության Վարչությունը, վոր հիմնված է Աշխժողկոմատին առընթեր և վորի գլուխն է կանգնած Արհեստակցական միությունների Խորհրդի և Աշխժողկոմատի փոխադարձ համաձայնությամբ ընտրված պետը, վոր միաժամանակ և Աշխժողկոմատի կոլեգիայի անդամ է:

Սոցիալական Ապահովագրության Վարչությունը բաղկացած է կազմակերպչական և ֆինանսական բաժիններից, նպաստների և կենսաթոշակների ու վիճակագրական յենթաբաժիններից:

Սոցիալական Ապահովագրության Վարչությունը կենտրոնական այն միակ մարմինն է, վոր կազմակերպում և ղեկավարում է սոցիալական ապահովագրության ամբողջ գործը Հայաստանում: Հսկում է Սոցապահո-

վագրական տեղական մարմինների (գանձարկղների, կայանների) գործունեության վրա, ստուգում է նրանց դրամական հաշիվները և գործառնության ճշտությունը, գործնական ցուցումներ և հրահանգներ է տալիս, գործունեության նոր ուղիներ է նշում և վարում տնտեսական քաղաքականությունը, հանդիսանալով միակ պատասխանատուն հանրապետության առջև։

Հանրապետության օբյեկտիվ պայմանների հետևանքով կազմակերպչական աշխատանքների հետ միասին, Սոցապվարչությունը ստիպված է գանձարկղների գործը թեթևացնելու նպատակով գանձել նաև ապահովագրական վճարներն այն հիմնարկ-ձեռնարկություններից, վորոնք գտնվում են կենտրոնում—Յերևանում, սակայն գործում են հանրապետական մասշտաբով, այսինքն՝ իրենց ճյուղերն ու բաժանմունքները ունեն գավառներում և ապա գանձած այդ ապվճարները մասնադրում է գավառական գանձարկղներին ըստ պատկանելույն։

Սոցապվարչությունում են կենտրոնացած նաև աշխատանքի անկարներին, աշխատանքի խեղանդամներին, մահացած նեցուկների ընտանիքներին, ինչպես և վաստակավոր ուսուցիչներին կենսաթոշակներ և նպաստներ նշանակելու գործի հետ կապված հարցերը։ Այս աշխատանքը տարվում է կազմակերպված հատուկ հանձնաժողովների միջոցով։

Սոցապվարչությունն իր գործունեությունը տարել է համեմատ բարձրագույն մարմինների վորոշումների, հրահանգների և կարգադրությունների ու Արհմիությունների Համահայաստանյան համագումարների դիրեկտիվներով։

**Բ) ԳԱՎԱՌԱԿԱՆ ՍՈՑԱՊ. ԳԱՆՁԱՐԿՂՆԵՐ ՅԵՎ ԿԱՅԱՆՆԵՐ**

Սոցիալական ապահովագրությունը գավառներում իրագործում է գավառական սոցապգանձարկղը կամ սոցապկայանը։ Այս յերկու մարմինների գործունեության և իրավասության մեջ եյական տարբերություններ չկան, տարբերությունը կրում է սոսկ կազմակերպչական բնույթ։ Սոցապգանձարկղի հաստիքը մեծ է և գործավարության ձևը բարդ, իսկ սոցապկայանի հաստիքը փոքր է և գործավարությունն ավելի պարզ։ Այս տարբերությունը բղխում է գործունեության շրջանակից։ Ապգանձարկղները սպասարկում են մեծ թվով ապահովագրվածների, իսկ ապկայանների սպասարկած ապահովագրվածների թիվը ավելի փոքր է և շատ քիչ դեպքերում է հասնում 500-ի կամ 1000-ի։

Թե սոցապգանձարկղների և թե սոցապկայանների գործունեությունը ղեկավարում է տվյալ վայրի Միջմիութենական կոնֆերանսում բանվորներից և ծառայողներից ընտրված կոմիտեն, վորի անդամ—նախագահը և հանդիսանում է գանձարկղի նախագահ։

Կոմիտեն ինչպես և Վերստուգիչ հանձնաժողովը ընտրվում են տարին մեկ անգամ, Կոմիտեյի գործունեյության տարեկան հաշվետվությունը և Վերստուգիչ հանձնաժողովի յեզրակացությունը լսվում ե տվյալ վայրի Միջմիութենական կոնֆերանսում կոմիտեյի վերընտրության նախորյակին։

**ՍՈՑԱՊ. ԳԱՆՁԱՐԿՂՆԵՐԻ ՑԱՆՑԸ**

Առ 1-ն հոկտեմբերի 1925 թ. Հ. Ս. Խ. Հ. սահմաններում սոցիալական ապահովագրությունը իրագործող մարմինների ցանցը բաղկացած ե յեղել 8 սոցապգանձարկղներից իրենց 4 բաշխիչ կայաններով և 2 սոցապկայաններից։

Սոցապահովագրական հիշյալ մարմիններից գանձարկղները հիմնված են յեղել.

1) Յերևանում յերկու բաշխիչ կայաններով, վորոնցից մեկը Սարդարաբադում, իսկ մյուսը Ղամարլվում։

2) Վաղարշապատում.

3) Լենինականում (նախկին Ալեքսանդրապոլում).

4) Ղարաքիլիսայում 2 բաշխիչ կայաններով, մեկը Ստեփանավանում (Ջալալօղլի) և մյուսը Ալլահվերդում (Մանեսի շրջան).

5) Դիլիջանում.

6) Նոր-Բայազետում.

7) Գորիսում.

8) Ղափանում, Ղաթարի պղնձահանքերի շրջանում։

## ՍՈՑԱՊԿԱՅԱՆՆԵՐ ՅԵՂԵԼ ԵՆ

1) Քեշիշքենդում—Դարալագյազի գավառ.

2) Մեղրիում.

Սոցիալական ապահովագրության վերոհիշյալ մարմիններից զատ գոյություն ունի և սոցիալական ապահովագրության յերկաթգծի գանձարկղ, վորն իրագործում ե սոցիալական ապահովագրությունը բացառապես յերկաթուղային բանվոր-ծառայողների միջավայրում։ Այսպիսով սոցապահովագրական զանազան մարմինների ցանցը Հայաստանի Հանրապետության սահմաններում ընդգրկել ե քիչ թե շատ բանվորաշատ 14 վայրեր, վոր ընդարձակ ե և միանգամայն բավարար ե սոցապահովագրությունը Հայաստանում, նրա արդի պայմաններում, իրագործելու համար։

Հայաստանի սոցիալական ապահովագրության մարմինների սխեման համաձայն վերոդրյալի ներկայացնում ե հետևյալ պատկերը.




Սոցապահովագրական մարմինների ապարատների հաստիքը կազմելիս հիմք է ընդունվում ապահովագրվածների թիվը, յուրաքանչյուր 500 ապահովագրվածի համար հաստիքով ընդունվում է մեկ աշխատակից: Այդ սկզբունքը պահպանվում է Հայաստանում, որի հիման վրա յել Հայաստանի սոցապմարմինների ապարատների համար բարձրագույն մարմինների կողմից հաստատված է և գոյություն ունի հետևյալ հաստիքը:

## ՀԱՍՏԻՔԻ ՀԻՄՔԸ ՅԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ

| Սոցապմարմիններ | Աշխատակիցների թիվը | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1923—1924 տարում | | | | 1924—1925 տարում | | | | Ապահովագ. թիվը |
| | Պա-տաս. | Մաս-նագ. | Տեխ-նիկ. | Ընդ. | պատ | Մաս. | Տեխ. | Ընդ. | |
| 1. Սոցապվարչություն . . . . . | 4 | 2 | 5 | 11 | 4 | 3 | 6 | 13 | |
| 2. Յերևանի սոցապգանձարկղ . . . | 3 | 5 | 6 | 14 | 3 | 5 | 8 | — | |
| ա) Սարդարաբադի բաշխիչ կայան . | — | — | — | — | — | — | 1 | 18 | 9820 |
| բ) Ղամարլվի . . | — | — | — | — | — | — | 1 | — | |
| 3. Վաղարշապատի սոցապգանձարկղ | 1 | 1 | 1 | 3 | 1 | 1 | — | 2 | 1177 |
| 4. Լենինականի » | 3 | 2 | 3 | 8 | 1 | 2 | 3 | 6 | 4820 |
| 5. Ղարաքիլիսայի » | 2 | 1 | 1 | 4 | 1 | 1 | 1 | — | |
| ա) Ստեփանավանի բաշխիչ կայան . | — | — | — | — | — | — | 1 | 5 | 2051 |
| բ) Ալլահվերդու . | — | — | — | — | — | — | 1 | — | |
| 6. Դիլիջանի սոցապգանձարկղ . . . | 2 | 1 | 1 | 4 | 1 | 1 | 1 | 3 | 950 |
| 7. Նոր-Բայազ. » | 1 | 1 | 1 | 3 | 1 | 1 | — | 2 | 765 |
| 8. Գերիուսու » | 1 | — | — | 1 | 1 | 1 | — | 2 | 851 |
| 9. Ղափանի » | — | — | — | — | 1 | — | — | 1 | 903 |
| 10. Քեշիշքենդի սոց. ապ. կայան . . . | 1 | — | — | 1 | — | 1 | — | 1 | |
| 11. Մեղրիի » | 1 | — | — | 1 | — | 1 | — | 1 | 110 |
| Ընդամենը . . | 19 | 13 | 18 | 50 | 14 | 17 | 23 | 54 | 21797 |

Այսպես ուրեմն սոցիալական ապահովագրությունն իրագործող մարմինների ամբողջ հաստիքը կազմված ե ընդամենը 54 անձից, չհաշված գանձարկղների և ապկայանների կոմիտեների անդամներին (բացի նախագահից), վորոնք ընտրովի յեն և իրենց աշխատանքի համար վարձատրություն չեն ստանում։

## ՍՈՑԱՊՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՊԸ ՍՏՈՐԱԴԱՍ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ

### ԿԵՆԴԱՆԻ ԿԱՊ

*Սոցապվարչությունն իր կապը տեղերի հետ իրագործում է կենդանի և գրավոր հաղորդակցությամբ։*

*Կենդանի կապը պահպանելու համար թե կենտրոնի աշխատակիցներն են մեկնել գավառները տեղական մարմինների գործունեությունը՝ հետազոտելու և տեղն ու տեղը հրահանգներ ու ցուցումներ տալու համար, և թե գավառական աշխատակիցներն են կենտրոն հրավիրվել զեկուցումներ ու բացատրություններ տալու և հրահանգներ ու ցուցումներ ստանալու համար։*

*Բացի այդ, հաշվետու տարում Յերևանում կազմակերպվել է սոցիալական ապահովագրության բնագավառում, գավառական աշխատակիցների Համահայաստանյան խորհրդակցություն, վորը տևել է 1925 թ. ապրիլի 21-ից մինչև ապրիլի 26-ը և ունեցել է 8 նիստ։ Հիշյալ համագումարին մասնակցել են նաև գավաշխ-տեսուչներն ու արհմիությունների ներկայացուցիչները։ Համագումարում քննության են առնվել տեղերի զեկուցումները, նշվել նրանց գործունեության պակասավոր կողմերը և ընդգծվել ապագա գործունեության ուղիները։*

*Այս բոլորից թեև պարզ է, վոր սոցապվարչությունն ամեն կերպ աշխատել է կենդանի սերտ կապ պահպանել, բայց և այնպես պետք է խոստովանվել, վոր այդ ցանկալի չափով ուժեղ չի յեղել։ Այդ հանգամանքը բացատրվում է գլխավորապես դրամական միջոցների սղությամբ և մեր յերկրի ոբեկտիվ պայմաններով։ Գավառական սոցապգանձարկղներից մի քանիսն այնքան հեռ են ընկած կենտրոնից, վոր նրանց հետ (Զանգեզուր, Նոր-Բայազետ, Դարալագյազ, Մեղրի) կենդանի կապ պահպանելը յերբեմն մեծ ժամանակ է խլում և աշխատակիցներին ամբողջ շաբաթներով կտրում գործից, վորպիսի հանգամանքը բացասաբար է անդրադառնում նրանց գործունեության վրա։*

### ԳՐԱՎՈՐ ԿԱՊ

*Անհամեմատ ուժեղ է յեղել գրավոր կապը, վորն արտահայտվել է նրանում, վոր պարբերաբար կենտրոնից ուղարկվել են հրահանգներ, ցուցումներ և բացատրություններ, ինչպես և տեղից պահանջվել է հաշվետվություններ, զեկուցումներ, վիճակագրական տեղեկություններ և այլն։*

### ԿԱՊԸ ԲԱՐՁՐԱԴԱՍ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ

*Վորչափով վոր սոցապվարչությունը կապ է պահպանել տեղերի հետ, վերջիններիս գործունեությունը ղեկավարելու նպատակով, նույն չափով էլ կապ է պահպանել սոցապահովագրական բարձրադաս մարմինների հետ թե ընդհանուր դիրեկտիվներ և ղեկավարություն ստանալու և թե վերջիններիս իրազեկ պահելու նպատակով։*

Այդ ուղղությամբ Սոցապվարչությունը պարբերաբար հաշվետվություններ, վիճակագրական տեղեկագրեր և զեկուցումներ է ներկայացրել Սոցապահովագրության Գլխավոր Վարչությանը, ինչպես և Անդրկովկասյան Խորհրդին, վորոնցից և դիրեկտիվներ է ստացել: Սոցապահովագրության պետն անձամբ պարբերաբար մեկնել է Թիֆլիս Գլխավոր Վարչության նիստերին մասնակցելու և զեկուցումներ տալու համար:

## ՎՈՐՔԱՆ ԱՊԱՀՈՎԱԴԻՐՆԵՐ ՅԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾՆԵՐ ԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

### ԱՊԱՀՈՎԱԴԻՐՆԵՐԻ ՅԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ՅԵՎ ՆՐԱ ԱՃՈՒՄԸ

1924/1925 թ. թե ապահովադիրների և թե ապահովագրված բանվոր ուժի քանակը զգալիորեն աճել է, վորպիսի հանգամանքը բացատրվում է մասամբ պետական արդյունաբերության զարգացմամբ, իսկ գլխավորապես գոյություն ունեցող հիմնարկ-ձեռնարկությունների (համեմատաբար անցյալ տարիների հետ) ավելի լրիվ հաշվառումով, ինչպես և սոցապահովագրական ապարատների բարելավումով:

Ապահովադիրների և ապահովագրվածների ընթացումն ավելի պարզ պատկերանում է հետևյալ աղյուսակում, ուր զուգընթացաբար առաջ են բերված նաև թվական տվյալներ անցյալ 1923/1924 թ. մասին:

| Ժամանակներ | 1923/24 թ. | | 1924/25 թ. | | Աճման տոկոսը |
|---|---|---|---|---|---|
| | Ապահովադիրներ | Ապահովագրվածներ | Ապահովադիրներ | Ապահովագրվածներ | |
| 1-ին յեռամսյակ առ 1-ն հունվարի . . . . . | 770 | 10,708 | 788 | 16,328 | 11, 5 տ. և 52 տոկոս |
| 2-րդ յեռամսյակ առ 1-ն ապրիլի . . . . . . . | 554 | 11,616 | 789 | 15,995 | 42 և 38 տոկ. |
| 3-րդ յեռամսյակ առ 1-ն հուլիսի . . . . . | 607 | 11,851 | 921 | 16,696 | 50 և 41 տոկ. |
| 4-րդ յեռամսյակ առ 1-ն հոկտեմբերի . . . | 688 | 12,715 | 965 | 21,797 | 40,3 և 71,4 տ. |

Առ 1-ն հոկտեմբերի 1925 թ. ապահովագրվածների թիվը ըստ գավառների ներկայացնում է հետևյալ պատկերը:

## ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ԱՌ 1-Ն ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1925 Թ. ԸՍՏ ՍՈՑԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԿՂՆԵՐԻ

| Գ Ա Վ Ա Ռ Ն Ե Ր | Ապահո-վագրված-ների թիվը | Տոկոսային հարաբերությունը ապահովագրվածների ընդհա-նուր թվի վերաբերմամբ |
|---|---|---|
| Երևանի . . . . . . . | 9.843 | 45,2 |
| Լենինականի . . . . . . | 4,820 | 22,1 |
| Էջմիածնի . . . . . . . . | 1,177 | 3,4 |
| Լոռի-Փամբակի . . . . . | 2,051 | 9,4 |
| Դիլիջանի . . . . . . . . | 950 | 4,4 |
| Նոր-Բայազետի . . . . . | 766 | 3,5 |
| Զանգեզուրի . . . . . . . . | 851 | 3,9 |
| Դարալագյազի . . . . . . | 326 | 1,5 |
| Մեղրիի . . . . . . . . . | 110 | 0,5 |
| Ղաթարի . . . . . . . . | 903 | 4,1 |
| Ընդամենը . . . . | 21,797 | 100,0 |

*Առաջ բերված աղյուսակից պարզ նկատվում է, վոր ապահովագրված բանվոր ուժի քանակը անընդհատ աճել է, յեթե ի նկատի չառնել նրա չնչին անկումը առ 1-ն ապրիլի 1925 թ., վոր արտահայտվել է 0,02 տոկոսով միայն, նույն բանը կարելի յե ասել նաև ապահովադիրների մասին, սակայն այստեղ պիտի բացատրել մի հանգամանք. այդ այն է, վոր առ 1-ն ապրիլի 1924 թ. ապահովադիրների թիվը 770-ից իջել է 554-ի: Այդ անկումը թեև շատ խոշոր է և արտահայտվում է մոտավորապես 39 տոկոսով, սակայն նա թվացող է միայն, վորովհետև փաստորեն անկում չկա, քանի վոր ինչպես տեսնում ենք նույն ժամանակամիջոցում ապահովագրվածների թիվը 10,708-ից բարձրացել է 11,616-ի, այսինքն՝ աճել է մոտ 0,09, տոկոսով (908 անձով):*

*Այդ թյուրիմացությունն առաջացել է նրանից, վոր 1923/24 թ. 2-րդ կիսամյակում ապահովադիրների հաշվառման ստուգում է կատարված և պարզվում է, վոր հաշվառումի մեջ այս կամ այն հիմնարկ-ձեռնարկության բաժինները ընդունվել են իբրև ուրույն միավորներ, վորոնց համար և առանձին հաշիվ է բացվել: Միայն ստուգելու համար բաժինները հանվել են հաշվառումից և միացվել հիմնարկ-ձեռնարկություններին:*

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

*Սոցիալական ապահովագրության դրամական միջոցները կազմվում են ապահովագրական վճարների մուծումներից, վոր կատարվում են ապահովագիր հիմնարկ-ձեռնարկությունների կողմից: Խորհրդային յերկրներում ընդհանրապես ապահովագրական վճարները միջին թվով կազմելու յեն զբաղված ուժին վճարվող աշխատավարձի 14 տոկոսը: Համաձայն վիճակագրական տվյալների Ադրբեջանում միջին նորման հավասար է 15,3 տոկոսի (նորմայից բարձր), իսկ Վրաստանում 13,24 տոկոսի (նորմային մոտիկ), մինչդեռ Հայաստանում հազիվ 11 տոկոսն է կազմում:*

*Այս յերևույթը բացատրվում է նրանով, վոր Հայաստանում ապահովագիր—հիմնարկ-ձեռնարկությունների մեծագույն մասը կազմում են պետական հիմնարկ-ձեռնարկությունները և կամ հասարակական հաստատությունները, վորոնք վճարում են համաձայն ժամանակավոր արտոնյալ կոպերացույցի՝ 10 տոկոս միայն:*

*Սոցապահովագրական մարմինները 1924—25 տարում ընդհանուր մուտք են ունեցել 823,935 ռ. 39 կ. և ապառիկ է մնացել 177. մինչդեռ 1923—24 թվին ընդհանուր տարեկան մուտքը կազմել է հազիվ 475.324 ռ. 85 կ. այսինքն մոտ 73 տոկոսով պակաս, քան այս հաշվետու տարում: Հաշվետու տարվա այդ բավականին խոշոր մուտքը բացատրվում է մասամբ էլ նրանով, վոր սոցապմարմինները ավելի խիստ միջոցներ են ձեռք առել ապահովագրական վճարները գանձելու:*

*Յեթե ի նկատի առնենք հաշվետու տարվա սկզբին առձեռն մնացորդ կանխիկ դրամը 34.462 ռ. 56 կ., կտեսնենք, վոր հաշվետու տարում Սոցապմարմինների տրամադրության տակ յեղել է ընդամենը 858.397 ռ. 95 կ.:*

## ԻՆՉՊԵՍ ՅԵՎ ԻՆՉ ՖՈՆԴԵՐ ԵՆ ԿԱԶՄՎՈՒՄ ՍՈՑԱՊՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ

### ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՖՈՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

*Սոցապահովագրական մարմինների դրամական միջոցները կազմվում են յերկու հիմնական ֆոնդեր.*

*ա) Գործառնական՝ վոր կազմում է տարեկան ընդհանուր մուտքի 75 տոկոսը և*

*բ) Բուժ. ոգնության, վոր կազմում է տարեկան մուտքի 25 տոկոսը:*

*Յուրաքանչյուր հիմնական ֆոնդից կազմվում են առանձին հատուկ ֆոնդեր հետևյալ ձևով.—*

*ա) Գործառնական ամբողջ ֆոնդի 10 տոկոսը հատկացվում է Համամիութենական պահեստի ֆոնդին, վորպիսին ամբողջովին տրամադրվում է Սոցիալական Ապահովագրության Անդրկովկասյան Գլխավոր Վարչությանը: Այդ ֆոնդից հոգացվում են Անդրկովկասյան Հանրապետությունների Սոցիալական Ապահովագրության Վարչությունից կազմակերպչական ծախքերը, ապա մնացյալ 90 տոկոսից դուրս են հանվում պահատական Սոց.*

ապահովագրական գանձարկղների կազմակերպչական փաստացի ծախքերը, իսկ մնացորդն ամբողջովին հատկացվում է նպաստների և կենսաթոշակների ֆոնդին, որի տարեվերջի մնացորդը կազմում է Հանրապետական գործառնական պահեստի ֆոնդը։

Այսպիսով հիմնական գործառնական ֆոնդից կազմվում են 4 առանձին ֆոնդեր. 1) կազմակերպչական ծախքերի ֆոնդ, 2) համամիութենական պահեստի ֆոնդ, 3) նպաստների և կենսաթոշակների ֆոնդ և 4) հանրապետական գործառնական պահեստի ֆոնդ։

**ԲՈՒԺ. ՈԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

բ) Բուժ. օգնության կամ «Գ» ֆոնդի 10 տոկոսը հատկացվում է Հանրապետական Բուժ. օգնության պահեստի ֆոնդին, 30 տոկոսը կուրորտա-սանատորիային ֆոնդին, 3 տ. կազմակերպչական ֆոնդին, իսկ մնացած 57 տոկոսը բուժ. օգնության ֆոնդին, Վերջին ֆոնդն ամբողջովին տրամադրվում է Առողջժողկոմատին ապահովագրվածների բուժօգնության Ենթաբաժնին, որը և ծախսվում է ապահովագրվածների բուժօգնության գործը կանոնավորելու և լավացնելու համար, ուրեմն բուժօգնության հիմնական ֆոնդից կազմվում են 3 առանձին ֆոնդեր. 1) Հանրապետական բուժօգնության պահեստի ֆոնդ, 2) Կուրորտա-սանատորային ֆոնդ և 3) Բուժօգնության ֆոնդ։

## ՍՈՑԱՊՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԵԿԱՆ ՄՈՒՏՔԸ ԸՍՏ ՖՈՆԴԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է ՀԵՏԵՎՅԱԼ ՊԱՏԿԵՐԸ

| ՖՈՆԴԵՐ | 1923—24 թ. | | 1924—25 թ. | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ռուբ. | Կ. | Ռուբ. | Կ. | Ռուբ. | Կ. |
| Հանրապ. գործ. ֆոնդ . . | | | 52061 | 13 | | |
| Նպաստ և թոշակ ֆոնդ | 337,333 | 80 | 438967 | 10 | 595806 | 47 |
| Գործառնական { կազմակ. ֆոնդ | | | 50418 | 93 | | |
| Գործառնական { Համամ. պահ. ֆ | | | 54339 | 31 | | |
| Բուժօգնութ. ֆոնդ . . | | | 135816 | 55 | | |
| Բուժօգնութ. ֆ. { Հանր. բուժօգ. պահ. ֆոնդ . . | 137,991 | 05 | 22906 | 09 | 228128 | 92 |
| Կուրորտա-սանատոր. ֆ. | | | 69406 | 28 | | |
| Ընդամենը . . | 475324 | 85 | 823935 | 39 | 823935 | 39 |

## ՆՊԱՍՏՆԵՐԻ ՅԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՖՈՆԴԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

| ՅԵՌԱՄՍՅԱԿՆԵՐ | 1923—24 թ. | | | | 1924—25 թ. | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Մուտք | | Յելք | | Մուտք | | Յելք | |
| | Ռ. | Կ. | Ռ. | Կ. | Ռ. | Կ. | Ռ. | Կ. |
| 1. Առ 1-ն Հունվարի . . | 66430 | 80 | 63.580 | 75 | 92.232 | 81 | 77.318 | 52 |
| 2. Առ 1-ն Ապրիլի . . . | 58436 | 18 | 30.632 | 57 | 79.776 | 07 | 78.629 | 53 |
| 3. Առ 1-ն Հուլիսի . . | 74843 | 58 | 82.467 | 17 | 125.378 | 76 | 107.738 | 97 |
| 4. Առ 1-ն Հոկտեմբերի . | 93896 | 41 | 95.054 | 37 | 141.579 | 46 | 181.437 | 14 |
| Ընդամենը . . . | 293.606 | 97 | 291.734 | 86 | 438.967 | 10 | 415.124 | 16 |

Թեև ինչպես նկատվում է առաջ բերած աղյուսակից, այս ֆոնդի մուտքը 1924—25 թ. մոտ 50 տոկոսով ավելի յե յեղել, քան նախորդ տարում, բայց և ծախսն էլ պակաս չե յեղել, նա գերազանցել է նախորդին մոտ 45 տոկոսով։ Ծախքի աճումը բացատրվում է նրանով, վոր հաշվետու տարում մի կողմից աճել եր ապահովագրվածների թիվը, իսկ մյուս կողմից բարձրացել եր բոլոր տեսակի նպաստների և կենսաթոշակների չափը։ Այդ պարզ կերպով պատկերանում է հետևյալ աղյուսակում.

| ՆՊԱՍՏՆԵՐԻ ՅԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ | 1923 թ. Հուլիսի Ապրանքառուբլով | | 1924 թ. Հունվարի Չերվոնեցներով | | 1925 թ. Մայիսի Չերվոնեց. | | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռ. | Կ. | Ռ. | Կ. | Ռ. | Կ. | |
| 1. Յերեխային կերակրելու նպաստ . . . . . | 1 | 75 | 2 | 35 | 4 | — | 2 ամիս շար. միանվ. |
| 2. Յերեխայի օժիտի համար նպաստ . . . . . | 7 | — | 9 | 10 | 16 | 50 | 10 տ.փ. 20 ո. |
| 3. Մահացածին թաղելու նպաստ . . . . . | 7 | — | 9 | 10 | 33 | [illegible] | |
| 4. Գործազրկության նպաստ՝ 1-ին կարգի . . . | 5 | — | 6 | 10 | 9 | 50 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2-րդ կարգի . . . . | 3 | 50 | 4 | 55 | 6 | 05 |
| 5. Աշխատանքի անկարության թոշակ՝ | | | | | | |
| 1-ին կարգի . . . . | 7 | — | 9 | 10 | 16 | 50 |
| 2-րդ » . . . . | 5 | — | 6 | 50 | 11 | — |
| 3-րդ » . . . . | 3 | 50 | 4 | 55 | 8 | 25 |
| 6. Մահացածի ընտանիքի թոշակ՝ | | | | | | |
| 1-ին անաշխատ. անդամին | 2 | 50 | 3 | 25 | 5 | 65 |
| 2-րդ » » . | 3 | 50 | 4 | 55 | 8 | 25 |
| 3-րդ » » . | 5 | — | 6 | 50 | 11 | — |
| 7. Ժամանակավոր աշխատունակության նպաստ . . | Լրիվ աշխատավ., բայց վոչ ավ. ամս. 120 ռ. | | Լրիվ աշխատավ., բայց վոչ ավ. ամս. 360 ռ. | | | |

Այս բոլորի վրա պետք է ավելացնել նաև այն, որ հաշվետու տարում սկսվեց թոշակ տրվել նաև տարրական դպրոցների վաստակավոր ուսուցիչներին (25 տարի ծառայողներին), ներկայումս ծառայության մեջ յեղածներին՝ ամսական 10 ռ., իսկ մյուսներին՝ 20 ռ.։

Այս աղյուսակից յերևում են և ծախսերի բոլոր այն տեսակները, որ կատարվում են նպաստների և թոշակների ֆոնդից։ Ծախսերի մեջ ամենամեծը ժամանակավոր անաշխատունակության ծախսն է։ Համաձայն օրենսդրության ժամանակավոր անաշխատունակության դեպքում, անկախ այն բանից, թե ինչից է նա առաջացել. հիվանդությունից, խեղանդամությունից, հղությունից, թե ընտանիքի հիվանդ անդամին խնամելու անհրաժեշտությունից, բանվորը կամ ծառայողը ստանում է իր լրիվ փաստացի աշխատավարձը, մինչև որ կվերականգնվի նրա աշխատունակությունը և կամ վերջնականապես կը հաստատվի նրա աշխատանքի կայուն անկարությունը։ Հղիության դեպքումն էլ, որ նպաստ ստանալու ժամանակամիջոցը սահմանափակված է. այն է՝ հղի աշխատավորուհին աշխատունակությունը ժամանակավորապես կորցրած է համարվում ծննդաբերությունից 8 շաբաթ առաջ և 8 շաբաթ հետո, յեթե ֆիզիկական և կամ մտավոր, բայց լարված աշխատանք է կատարել (մտավոր աշխատավորուհիների այս կարգին են պատկանում. հեռախոսուհիները, հեռագրողուհիները, մանկաբարձուհիները, գթության քույրերը, մասաժիստկաները, բժիշկները, բուժակուհիները, ատամնաբուժները, գյուղական դպրոցների ուսուցչուհիները, գիշերային աշխատանքով զբաղվող կանայք, մեքենագրուհիները և այլն) և ծննդաբերությունից 6 շաբաթ առաջ և 6 շաբաթ հետո բոլոր մյուս մտավոր աշխատավորուհիները։

1. Ժամանակավոր անաշխատունակության համար բանվորներին և ծառայողներին նպաստ է տրված համեմատ իրենց աշխատավարձի.

| ՏԱՐԻՆԵՐ | Ժամանակավոր անաշխատունակ որերի թիվը | Ժամանակավոր անաշխատունակութ. համար վճարված ե | | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| | | Ռուբլի | Կ. | |
| 1923—1924 թ. | 60.389 | 79.895 | 55 | |
| 1924—1925 թ. | 135.448 | 169.946 | 03 | |

Այս թվական տվյալներից յերևում ե, վոր հաշվետու տարում անաշխատունակ որերի թիվը նախորդ տարվանից ավելի յե յեղել մոտ 108 տոկոսով, վորպիսի հանգամանքը բացատրվում ե նրանով, վոր հաշվետու տարում և ապահովագրվածների թիվը ե ավելի յեղել, միջին թվով մոտ 50 տոկոսով և թե ավելի լայն ու կանոնավոր հիմքերի վրա յե դրված յեղել ապահովագրվածների բուժ. ոգնության գործը, իսկ այն հանգամանքը, վոր հաշվետու տարում ժամանակավոր անաշխատունակության համար մոտ 113 տոկոսով ավելի յե վճարված, քան նախորդ տարում, բացարձակորեն կապված ե աշխատավարձի բարձրացման հետ, վորը հաշվետու տարում խիստ զգալի յե յեղել: Բանվոր ծառայողների փոխհատուցված 1924—25 թ. անաշխատունակ որերի թիվը ըստ ամիսների տալիս ե հետևյալ պատկերը.

ՎՃԱՐՎԱԾ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՈՐԵՐԻ ԹԻՎԸ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ

| ԱՄԻՍՆԵՐ | Որերի թիվը | Տոկոսային հարաբերությունը գումարի նկատմամբ | Յուրաքանչյուր 100 ապահովագրվածի ընկնում ե |
|---|---|---|---|
| Հոկտեմբեր . . . | 9.157 | 7,3 | 60 |
| Նոյեմբեր . . . | 6.487 | 5,2 | 41 |
| Դեկտեմբեր . . . | 7.832 | 6,2 | 48 |
| Հունվար . . . . | 7.309 | 5,8 | 46 |
| Փետրվար . . . | 8.505 | 6,8 | 53 |
| Մարտ . . . . | 9.673 | 7,7 | 61 |
| Ապրիլ . . . . | 9.702 | 7,8 | 64 |
| Մայիս . . . . | 11.580 | 9,2 | 77 |
| Հունիս . . . . | 12.290 | 9,8 | 74 |
| Հուլիս . . . . | 14.144 | 11,3 | 85 |
| Ոգոստոս . . . . | 15.361 | 12,2 | 81 |
| Սեպտեմբեր . . . | 13.408 | 10,7 | 64 |
| Գումարը . . | 125.448 | 100 | 65 |

| | | | |
|---|---|---|---|
| Ամսում միջին թվով . . . | 10.454 | — | 65 |
| Ամսական միջին թվով { Հոկտեմբերին Մարտին . . | 8.160 | — | 52 |
| Ամսական միջին թվով { Ապրիլին . . Սեպտեմբերին | 12.748 | — | 74 |

## 2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆԿԱՐՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՆՊԱՍՏՆԵՐԸ

| Տ Ա Ր Ի Ն Ե Ր | Աշխատանքի անկարների ընդհանուր թիվը | Աշխատ. անկարն. բաց թողած նպ. Ռուբլի | Աշխատ. անկարն. բաց թողած նպ. Կ. |
|---|---|---|---|
| 1923—1924 թ. | 1.714 | 11.846 | 56 |
| 1924—1925 թ. | 1.644 | 83.821 | 11 |

Այն հանգամանքը, վոր հաշվետու տարում նպաստառու աշխատանքի անկարների թիվը ընդհանուր առմամբ պակասել ե, բացատրվում ե նրանով, վոր կատարված ստուգման հետեվանքով մի քանիսը հանվել են աշխատանքի անկարների շարքերից, վոմանք համապատասխան աշխատավորական ստաժը չունենալու, վոմանք ել աշխատանքի ընդունակ լինելու պատճառներով։ Այդպիսիների թիվը ընդհանրապես յեղել ե շատ քիչ, ընդամենը 70 անձ, վոր կազմում են ընդհանուր թվի հազիվ 4,5 տոկոսը միայն։ Հակառակ այդ հանգամանքի նկատում ենք, վոր տրված նպաստների գումարը 101 տոկոսով ավելի յե յեղել, քան նախորդ տարում։ Այդ բացատրվում ե նրանով, վոր մի կողմից աշխատանքի անկարության նպաստի չափն ե բարձրացել, իսկ մյուս կողմից ել աշխատանքի անկարներից, վոմանք ստորին կարգերից փոխադրված են առաջին կարգերը, ըստ վորում և նպաստի տարբերությունն ավելի յե խոշորացել։ Վորպեսզի այս պատկերը պարզ լինի, կարևոր ենք համարում պարզելու, վոր աշխատանքի անկարները բաժանվում են 3 կարգի. առաջին կարգին են պատկանում աշխատանքի այն անկարները, վորոնք կորցրել են իրենց աշխատունակության 75—100 տոկոսը և չեն կարող ապրել առանց ուրիշի ոգնության։ Այդ կարգի անկարների նպաստը հավասար ե տվյալ վայրի միջին աշխատավարձի 50 տոկոսին, վոր համարվում ե լրիվ կենսաթոշակ. 2-րդ կարգին են պատկանում աշխատանքի այն անկարները, վորոնք կորցրել են իրենց աշխատունակության 60—75 տոկոսը, վորոնք թեև ուրիշի ոգնության կարիք չեն զգում, բայց և վորևե աշխատանք կատարել չեն կարող։ Այդ կարգի անկարները ստանում են առաջին կարգի ստացածների— այն ե՝ լրիվ կենսաթոշակի 2/3-ը։

3-րդ կարգին պատկանում են այն անկարները, վորոնք թեև կորցրած են իրենց աշխատունակության 45—60 տոկոսը, բայց և այնպես ընդունակ են մերթ-ընդմերթ ժամանակավոր թեթև աշխատանքներ կատարել։ Այդ կարգի անկարները ստանում են առաջին կարգի ստացած լրիվ թոշակի 1/2-ը։

Միջին աշխատավարձը սահմանվում է և հայտարարվում է 3 ամիսը մեկ անգամ։ Միջին աշխատավարձը սահմանելու համար հիմք են ընդունում տվյալ վայրում զբաղված վարձու աշխատավորների ընդհանուր թիվը և նրանց վճարվող ընդհանուր աշխատավարձը և, բաժանելով մեկը մյուսի վրա, ստացվում է տվյալ վայրի միջին աշխատավարձը։

Հայաստանի համար 1925 թ. մայիսի 1-ից միջին աշխատավարձը հայտարարված էր 33 ռ., վորը նույն թվի Հոկտեմբերի 1-ից հայտարարվեց 48 ռ.։

Աշխատանքի անկարներին այս կամ այն կարգում դասելու հարցը վորոշվում է բժշկական էքսպերտային (քննության) միջոցով։ Այդ նպատակով Սոցապմարմիններին կից կազմված են բժշկական հատուկ հանձնաժողովներ հմուտ և մասնագետ բժիշկներից, վորոնք և Սոցապմարմինների և Արհմիությունների ներկայացուցիչների մասնակցությամբ աշխատանքի անկարներին բազմակողմանի և մանրազնին քննության են յենթարկում և պարզում աշխատունակության կորուստման տոկոսը։

Հաշվետու տարվա նպաստառու անկարների թիվը ըստ ամիսների տալիս է հետևյալ պատկերը։

## 3. ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՍՏԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԹԻՎԸ

### ա) Աշխատանքի անկարներ

| ԱՄԻՍՆԵՐ | ԿԱՐԳ | | | | Տոկոսային հարաբերությունը աշխատանքի անկարների ապահովագրվածների վերաբերմամբ |
|---|---|---|---|---|---|
| | 1-ին կարգ | 2-րդ կարգ | 3-րդ կարգ | Ընդամենը | |
| Հոկտեմբեր . . . | 62 | 67 | 80 | 209 | 1,4 |
| Նոյեմբեր . . . | 62 | 67 | 82 | 311 | 1,3 |
| Դեկտեմբեր . . | 45 | 22 | 40 | 107 | 0,7 |
| Հունվար . . . | 50 | 61 | 73 | 184 | 1,2 |
| Փետրվար . . . | 65 | 56 | 52 | 173 | 1,1 |
| Մարտ . . . . | 40 | 46 | 43 | 129 | 0,8 |
| Ապրիլ . . . . | 37 | 39 | 28 | 104 | 0,7 |
| Մայիս . . . . | 35 | 36 | 24 | 95 | 0.6 |
| Հունիս . . . . | 31 | 36 | 24 | 91 | 0,5 |
| Հուլիս . . . . | 32 | 37 | 21 | 90 | 0,5 |
| Օգոստոս . . . | 32 | 46 | 32 | 120 | 0,6 |
| Սեպտեմբեր . . | 48 | 50 | 33 | 131 | 0.6 |
| Գումարը . . | 549 | 569 | 532 | 1644 | |
| Միջին թվ. մեկ ամս. | 46 | 47 | 44 | 137 | 0.8 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Տոկոսային հարաբերությունը գումարի նկատմամբ . . . | 33.6 | 34.3 | 22,1 | 100 | |

## 3. ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ ՅԵՎ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏՐՎԱԾ ՆՊԱՍՏՆԵՐԸ

| ՏԱՐԻՆԵՐ | Գործազուրկ մարդ ամիսների թիվը | Գործազրկության համար տրված նպաստները | |
|---|---|---|---|
| | | Ռուբ. | Կ. |
| 1923—1924 թ. | 7.491 | 29.265 | 21 |
| 1924—1925 թ. | 4.684 | 31.221 | 60 |

Գործազուրկ մարդ ամիսների թիվը մոտ 40 %-ով պակասել է, մինչդեռ գործազրկության համար տրված նպաստի գումարը մոտ 6 % ավելացել է։ Նպաստների գումարի ավելացումը հետևանք է ընդհանրապես գործազրկության համար տրվող նպաստների չափերի բարձրացման, իսկ գործազուրկ մարդ-ամիսների թվի նվազումը բացատրվում է մի քանի պատճառներով. նախ վոր ընդհանուր պետական արդյունաբերությունն է զգալի կերպով զարգացել, վոր և կլանել է գործազուրկների մի մասը, ապա գործազուրկներին աշխատանք տալու նպատակով Աշխժողկոմատի գծով մի շարք միջոցներ են ձեռնարկված, ինչպես որինակ՝ աշխատանքային արտելների և հասարակական աշխատանքների կազմակերպումն, վոր դարձյալ բավականին մեծ թվով գործազուրկներ են զբաղեցրված։ Ի հարկե պակաս դեր չի խաղում և այն հանգամանքը, վոր Հայաստանի գործազրկության շարքերում յեղածների մեծ մասը. թե վորակյալ բանվորներ չեն և թե համապատասխան ստաժ չունեն։

Հայաստանում գոյություն ունեցող գործազրկությունը և նրա նպաստառու գործազուրկները տալիս են հետևյալ պատկերը։

## ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ

| Ամիսներ | Աշխբորսայում արձանագրված գործազուրկների թիվը | Նպաստ ստացողների թիվը | | | Տոկոսային հարաբերությունը ընդհանուր գործազրկության նկատմամբ |
|---|---|---|---|---|---|
| | | 1-ին կարգով | 2-րդ կարգով | Ընդամենը | |
| Հոկտեմբեր . . | 2.427 | 160 | 325 | 485 | 20,0 |
| Նոյեմբեր . . . | 2.660 | 159 | 335 | 494 | 18,6 |
| Դեկտեմբեր . . | 1.851 | 73 | 231 | 304 | 16,4 |
| Հունվար . . . | 1.940 | 68 | 172 | 240 | 12,4 |
| Փետրվար . . . | 2.078 | 68 | 172 | 240 | 11,5 |
| Մարտ . . . . . | 2.283 | 98 | 560 | 658 | 28,8 |
| Ապրիլ . . . . . | 2.981 | 69 | 232 | 351 | 11,8 |
| Մայիս . . . . | 3.600 | 58 | 359 | 417 | 11,6 |
| Հունիս . . . . | 3.861 | 59 | 380 | 439 | 11,4 |
| Հուլիս . . . . . | 4.378 | 39 | 367 | 496 | 9,3 |
| Օգոստոս . . . | 4.787 | 48 | 330 | 378 | 7,9 |
| Սեպտեմբեր . . | 5.004 | 36 | 236 | 272 | 5,4 |
| Գումարը մարդ | 37.850 | 935 | 3.749 | 4684 | — |
| Ամսեկան միջին թիվ . . | 3.154 | 78 | 312 | 390 | 12,4 |

Առաջ բերված աղյուսակից նկատվում է, վոր միջին թվով գործազուրկների 12,4% Սոցապմարմինների կողմից ապահովված է գործազրկության նպաստով:

Տեղին է ասել, վոր գործազուրկները ապահովագրվում են ըստ իրենց վորակի, վորի համար սահմանված է յերկու կարգ: Առաջին կարգով ապահովագրվում են բոլոր բարձր վարակումի բանվորներն ու ծառայողները, անկախ աշխատավորական ստաժից և վորակյալ բանվորները, վորոնցից աշխատավորական ստաժ է պահանջվում. Արհմիության անդամներից մեկ տարվա, իսկ վոչ անդամներից 3 տարվա ստաժ: Յերկրորդ կարգով ապահովագրվում են կիսավորյակյալ և վոչ վորակյալ գործազուրկները, ըստ վորում Արհմիության անդամներից պահանջվում է 3 տարվա, իսկ վոչ անդամներից 5 տարվա ստաժ:

Հաշվետու տարեվերջին նպաստի չափը սահմանված էր առաջին կարգի

համար՝ 9 ռ. 80 կ., իսկ 2-րդ կարգի համար՝ 6 ռ. 50 կ.: Գործազրկության նպաստը տրվում է յուրաքանչյուր տոմարագրական տարում 6 ամիս շարունակ:

Պետք է ասել նաև այն, վոր գործազրկության ընթացքում տեղի ունեցած ժամանակավոր անաշխատունակությունը, ինչպես և ժամանակավոր աշխատանք կատարելը չի անդրադառնում գործազրկության նպաստի իրավունքի վրա և չի սահմանափակում այն:

Գործազրկությունից ապահովագրվածը օգտվում է նաև ապահովագրման լրացուցիչ տեսակներից. ծննդաբերության, մանկան կերակրելու և թաղման համար նպաստ ստանալու արտոնություններից:

Իսկ բժշկական ձրի օգնության մասին խոսելն ավելորդ է, վորովհետև այն ստանում են բոլոր գործազուրկ աշխատավորական տարրերը:

## 4. ՎՈՐՔԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ Ե ՏՐՎԱԾ ՄԱՀԱՑԱԾՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ

| ՏԱՐԻՆԵՐ | Մահացած նեցուկների թիվը մարդ ամիսներով | | | Յուրաքանչյուր ընտանիքի ամսեկան միջին թիվը | |
|---|---|---|---|---|---|
| | | Ռ. | Կ. | Ռ. | Կ. |
| 1923—1924 թ. | 705 | 4372 | 04 | 6 | 20 |
| 1924—1925 թ. | 1100 | 11995 | 19 | 10 | 90 |

Հաշվետու տարում մահացած ապահովագրվածների ընտանիքներին նպաստ է տրվել ըստ նրանց ընտանիքում յեղած անաշխատունակների թվի: Մեկ անաշխատունակ անդամ ունեցող ընտանիքի համար կենսաթոշակի չափը յեղել է 5 ռ. 65 կ., յերկու անաշխատունակ անդամ ունեցող ընտանիքի համար 8 ռ. 25 կ. և 3 ու ավելի թվով անաշխատունակ անդամ ունեցողի համար 11 ռ.: Անաշխատունակ են համարվում մահացած ապահովագրվածի խնամքի տակ ապրողներից՝ ծնողները—հայրը 55 տ. և մայրը 50 տ. բարձր, յեթե միայն նրանք ֆիզիքական և հոգեկան պակասություններ չունեն (վերջիններն անաշխատունակ են համարվում անկախ տարիքից) յեղբայրները, քույրերն ու զավակները մինչև 16 տարեկան, իսկ յեթե դպրոց են գնում 18 տարեկան հասակը, կինը անկախ տարիքից, յեթե մինչև ութ տարեկան յերեխա ունի, իսկ մյուս դեպքերում կախված տարիքից և ֆիզիքական ու հոգեկան առողջությունից:

Բոլոր այն վորբերը, անկախ նրանց ծագումից և ազգակցական կապերից, վորոնք ընդունված են ապահովագրվածի ընտանիքի մեջ և փաստորեն ապրում են նրա հաշվին: Ընտանիքի բոլոր այն անդամները, վորոնք վոր հոգեկան կամ ֆիզիքական արատի հետևանքով մինչև 16 տարեկան հասակը անաշխատունակ են դառնում: Մահացած ապահովագրվածների թիվը հաշվետու 1924—25 տարում ըստ ամիսների տալիս է հետևյալ պատկերը:

## ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՍՏԱՑՈՂ ՄԱՀԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԹԻՎԸ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ

| ԱՄԻՍՆԵՐ | ԸՆՏԱՆԻՔՆԵՐ | | | | Տոկոսային հարաբերությունը յուրաքանչյուր ապահովագրված ընտանիքի |
|---|---|---|---|---|---|
| | 1 անաշխատունակից | 2 անաշխատունակից | 3 և ավելի | Ընդամենը | |
| Հոկտեմբեր . . . | 22 | 30 | 52 | 104 | 0,7 |
| Նոյեմբեր . . . | 20 | 36 | 44 | 100 | 0,6 |
| Դեկտեմբեր . . | 16 | 31 | 51 | 98 | 0,6 |
| Հունվար . . . | 16 | 30 | 56 | 102 | 0,6 |
| Փետրվար . , . | 12 | 26 | 40 | 78 | 0,5 |
| Մարտ . . . . | 15 | 26 | 46 | 87 | 0,5 |
| Ապրիլ . . . , | 12 | 30 | 45 | 57 | 0,6 |
| Մայիս . . . . | 17 | 24 | 46 | 87 | 0,6 |
| Հունիս . . . . | 16 | 20 | 39 | 75 | 0,5 |
| Հուլիս . . . . | 17 | 10 | 39 | 73 | 0,4 |
| Օգոստոս . . . | 16 | 27 | 56 | 99 | 0,5 |
| Սեպտեմբեր . . | 25 | 25 | 60 | 100 | 0,5 |
| Գումարը մարդամիսներով . . . | 205 | 322 | 514 | 1100 | |
| Ամսեկան միջին թվ. | 17 | 27 | 48 | 92 | 0,6 |
| %-ը գումարի նկատ. | 18,5 | 29,3 | 52,2 | 100 | — |

1923—24 և 1924—25 թվականների տվյալների բաղդատությունից նկատվում է, որ հաշվետու տարում մահացած նեցուկների թիվը մարդամիսներով ավելացել է միայն 53 տոկոսով, մինչդեռ տրված կենսաթոշակի գումարը ավելացել է մոտ 175 տոկոսով. այս հանգամանքը գլխավորապես հետևանք է մահացած ընտանիքին տրվող կենսաթոշակի չափի բարձրանալու և մասամբ էլ թոշակառուների թվի աճումի:

## 5. ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ ՅԵՐԵԽԱՅԻ ՈԺԻՏԻ ՀԱՄԱՐ ՏՐՎԱԾ ՄԻԱՆՎԱԳ ՆՊԱՍՏՆԵՐԸ

| Տ Ա Ր Ի Ն Ե Ր | Ծննդաբերության դեպքեր | Տրված միանվագ նպաստների գումարը | | Յուրաքանչյուր մի դեպք. համ. միջ. թվ. | |
|---|---|---|---|---|---|
| | | Ռուբ. | Կ. | Ռուբ. | Կ. |
| 1923—1924 թ. . . . . | 2.066 | 17.618 | 50 | 8 | 53 |
